ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայ մեծանուն գրող, պատմավիպասան Դերենիկ Դեմիրճյանը (1877–1956) հայտնի պատճառներով խուսափել է Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում իր ծավալած գործունեության և Հ. Հ. Դաշնակցությանն անդամակցելու մասին խոսելուց: Եթե 1930-ական թվականների առաջին կեսին գրված «Ինքնակենսագրություն»-ում նա ակնարկում է 1920 թ. Երևանում պաշտոնավարելու մասին[1], ապա հետպատերազմյան շրջանում գրած ընդարձակ «Ինքնակենսագրություն»-ում շրջանցում է այդ փաստը[2]: Գրականագետ Տ. Հախումյանի հուշերում հպանցիկ հիշատակություն կա Դ. Դեմիրճյանի երևանյան գործունեության մասին. «Հիշյալ քննարկումից հետո (խոսքը 1920 թ. Թիֆլիսում գրողի «Գարուն» բանաստեղծությունների ժողովածուի քննարկման մասին է – Հ. Ս.) մենք երկար ամիսների ընթացքում Դերենիկ Դեմիրճյանին այլևս չհանդիպեցինք: Ասում էին, թե մեկնել է Հայաստան և աշխատում է կրթական գործով զբաղվող նախարարության մեջ: Ավելացնում էին, որ իբր նրան է հանձնված արվեստի ու գրականության գործերը տնօրինելու պաշտոնը: Թե այնտեղ ինչ գործեր է ձեռնարկել, մեզ հայտնի չէր»[3]:

Թե՛ խորհրդային և թե՛ հետխորհրդային տարիներին Դ. Դեմիրճյանի կյանքին ու ստեղծագործություններին նվիրված բազմաթիվ աշխատություններում անդրադարձ չկա Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակ նրա գործունեության, հայ մշակույթի և արվեստի զարգացմանն ուղղված նրա ձեռնարկումների մասին[4], որոնք, ամենայն հավանականությամբ, դեմիրճյանագետներին հայտնի չեն եղել:

1920 թ. մայիսից ՀՀ Բյուրո-կառավարությունը սկսեց պետության կառավարման զանազան պաշտոններում նշանակել դաշնակցական գործիչների: Ըստ այդմ՝ Երևան է հրավիրվում նաև արդեն ճանաչված գրող, Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, դաշնակցական Դերենիկ Դեմիրճյանը: Վերջինս, իր իսկ վկայությամբ, պարտավորություն էր զգում գալ հայրենիք և ծառայել իր ժողովրդին ու նորա-

---

[1] *Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Դ. Դեմիրճյանի ֆ., ց. 1, գ. 768, թ. 7–9:*

[2] *Դ. Դեմիրճյան. Անծանոթ էջեր, Երևան, 1974, էջ 285–300, նույնի՝ Երկերի ժողովածու 14 հատորով, հ. XIV, Երևան, 1987, էջ 7–20:*

[3] *Ժամանակակիցները Դ. Դեմիրճյանի մասին, կազմեց Գ. Մադոյանը, Երևան, 1997, էջ 220:*

[4] *Տե՛ս Դ. Դեմիրճյան. Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1931, էջ V–VIII, Հ. Բ. Մուրադյան. Դերենիկ Դեմիրճյան. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1961, Ս. Բ. Աղաբաբյան. Դերենիկ Դեմիրճյան, Երևան, 1977, Հ. Ս. Թամրազյան. Դերենիկ Դեմիրճյան, Երևան, 1977, Էդ. Թոփչյան. Դեմիրճյանի դասերը.– Դ. Դեմիրճյան. Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1977, էջ 5–23, Գ. Ա. Մադոյան. Դերենիկ Դեմիրճյան, Երևան, 1986, Ռ. Գ. Դավթյան. Դերենիկ Դեմիրճյանը և արվեստը, Երևան, 2003, Մ. Մ. Խաչատրյան. Դերենիկ Դեմիրճյանի երգիծանքը, Երևան, 2004, Դ. Դեմիրճյան. Ընտրանի, Երևան, 2012, էջ 506–508 և այլն:*

հաստատ պետականությանը[5]: ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Ղազարյանի հրամանով Դ. Դեմիրճյանը սեպտեմբերի 1-ից նշանակվել է նախարարության Արվեստի բաժնի վարիչ՝ 18.800 ռուբլի աշխատավարձով: Մինչ այդ, սոսկ թղթի վրա գոյություն ունեցող Արվեստի բաժինը Դ. Դեմիրճյանի ղեկավարությամբ սկսել է կազմակերպված աշխատանքներ իրականացնել: Անց են կացվել տարբեր դասընթացներ, որոնք վարում էին ժամանակի ճանաչված մտավորականներ: Այսպես՝ սեպտեմբեր-նոյեմբերին բաժնի կազմակերպած դրամատիկական դասընթացներում դասավանդել են՝ Վարդան Միրզոյանը (վարիչ և դասատու), Դ. Դեմիրճյանը, պարուսույց Սուրեն Մխիթարյանը, հոգեբանության ուսուցիչ Ա. Շավարշյանը: Նոյեմբերին բաժնի խմբավարական դասընթացներում պաշտոնավարում էին □թեորիայի դասատու□ Սարգիս Բարխուդարյանը և □դաշնակի դասատու□ Աննա Արզարյանը[6]: Այս դասընթացները տեղի էին ունենում 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ վտանգված էր պետության անկախությունը:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմանը հաջորդած օրերին Խորհրդային Հայաստանի լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի թիվ 1 հրամանով 1920 թ. դեկտեմբերի 15-ին աշխատանքից ազատվեցին Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի վերածված նախկին ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարության չորս ղեկավար աշխատակիցներ՝ նախարարի օգնական Պ. Սոտնիկյանը, Արվեստի բաժնի վարիչ Դ. Դեմիրճյանը, դպրոցական վերահսկիչներ Ս. Շխյանը և Ա. Շահնազարյանը[7]: Իրենց հասանելիք լուծարքային նպաստները պետական գանձարանի առձեռն ֆոնդից նրանք ստացել են դեկտեմբերի 21-ին[8]: Արվեստի բաժնի վարիչի պաշտոնում դեկտեմբերի 15-ին Դ. Դեմիրճյանին փոխարինել է բանաստեղծ Ե. Չարենցը:

Ստորև հրապարակվող փաստաթղթերը վերաբերում են խնդրո առարկա ժամանակահատվածում գրողի գործունեությանը: Հատկապես ուշագրավ է -6 փաստաթուղթը՝ գրողի ինքնագիր զեկուցագիրը լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանին՝ Արվեստի բաժնի կատարած աշխատանքների և ՀՀ օրոք արվեստի ճյուղերի դրության վերաբերյալ: Փաստաթղթերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում (ֆ. 122, 307) և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Դ. Դեմիրճյանի ֆ.): Դրանք հրապարակում ենք ժամանակակից ուղղագրությամբ, կետադրական աննշան շտկումներով: Մեր կողմից վերնագրվել են միայն -3 և -7 փաստաթղթերը: Հավելումները կատարել ենք ուղղանկյուն փակագծերում ([]), իսկ հրապարակումից դուրս թողնված հատվածները՝ սուրանկյուն փակագծերում՝ բազմակետեր դնելով (<…>):

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

---

[5] *ԳԱԹ, Դ. Դեմիրճյանի ֆ., ց. 1, գ. 768, թ. 7–8:*

[6] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 307, ց. 1, գ. 360, թ. 127–130, 54–54 շրջ.:*

[7] *Նույն տեղում, ֆ. 122, ց. 4, գ. 6, թ. 1:*

[8] *Նույն տեղում, ֆ. 307, ց. 1, գ. 360, թ. 72 և շրջ.:*

-1

ՀՐԱՄԱՆ
ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ

17 սեպտեմբերի 1920 թ.
- 145

Դերենիկ Դեմիրճյանը նշանակվում է Հանրային կրթության և արվեստի նախարարության Արվեստի բաժնի վարիչ ս/թ սեպտեմբերի 1-ից:

Հանր[ային] կրթ[ության] և ար[վեստի] նախարար՝ Գ. Ղազարյան

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 355, թ. 4 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

-2

ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ[1]

28 սեպտեմբերի 1920 թ.
- 4443

Առ -174,
Ներկայացվում է Հանրային կրթ[ության] և արվ[եստի] նախարարության պաշտոնեության ցուցակը:

-	Անուն-ազգա-նուն	Պաշ-տոն	Ընտա-նիքի ան-դամ-ների թիվը	Ընտա-նիքի անդամ-ների ա-նուններ-ը և տարի-քը	Ընտա-նիքի անդամ-ների զբաղ-մունքը	Ցանքս ունեն, թե՝ ոչ	Հաս ցե	Ծա-նո-թութ-յուն
5	Դերե-նիկ Դե-միրճ-յան	Արվ[ես տի] բաժ[նի] վարիչ	3	Մա-րիամ՝ կին – 28 Վիգեն՝ տղան – 5	–	ոչ	Սա-դո-վա-յա 11	–

Հանրային կրթության և արվեստի նախարար՝ Գ. Ղազարյան
Դիվանապետ՝ Կ. Մելիք-Օհանջանյան

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 356, թ. 11–12: Բնագիր: Ձեռագիր:

- 3

ՄԱՐԻԱՄ ԿԱՆԱՅԱՆ – ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՆԱՄԱԿՆ ԱՄՈՒՍՆՈՒՆ

12 հոկտեմբերի 1920 թ.
Թիֆլիս

Միրելի Դերենիկ

[Սեպտեմբերի] 27-ին գրած նամակդ ստացա հոկտ[եմբերի] 7-ին: Ուղարկել էիր երեք կաթ[1], 925 ռ. և դոշաբ: Վերջինս չստացա: Երևի թափել է բերողը: Նամակդ ստանալուն պես գնացի բժ[իշկ] Մաղաքյանի մոտ՝ հետս տանելով իմ ռեցեպտը: Նա ասաց. □Ես կտամ ավելի լավ ռեցեպտ, որը շատ շատերին փրկել է մալարիայից□: <…>

Ուղղակի անորոշության մեջ մնացել եմ: Գալ[2], թե մնալ ուսուցչական պաշտոնով … Բայց, երևի, այս տարի մի կերպ կքաշքշեմ: Գարնանը ինչպես կլինեմ, չգիտեմ[3]: <…>

Համբույրներով՝ Մարիամ

ԳԱԹ, Դ. Դեմիրճյանի ֆոնդ, լրաց. ցուցակ, գ. 218, թ. 1 – 2 շրջ.: Բնագիր: Ինքնագիր:

-4

ՀՐԱՄԱՆ
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

15 դեկտեմբերի 1920 թ.
-1

Ազատ են կացուցվում պաշտոնից Հանրային կրթության և արվեստի նախարարի օգնական Պողոս Սոտնիկյանը, նույն նախարարության Արվեստի բաժնի վարիչ Դերենիկ Դեմիրճյանը և վերահսկիչ տեսուչներ Սիմեոն Շիյանն ու Ասլան Շահնազարյանը ս/թ դեկտեմբերի 15-ից:

Լուսժողկոմ՝ Ա. Հովհաննիսյան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 4, գ. 6, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

-5

ՑՈՒՑԱԿ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՈՒՄ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ

15 դեկտեմբերի 1920 թ.

-	*Պաշտոն, անուն-ազգա-նուն*	*Երբ է հաս-տատվել պաշտո-նում*	*Քանի ամսվա ռոճիկի չափով նպաստ պիտի ստանա*	*Ամսա-կան ռոճիկը*	*Լիկվիդա-ցիոն նպաստի գումարը*	*Ստացողի ստորագրութ-յունը*
2	*Արվեստի բաժնի նախկին վարիչ Դ. Դեմիրճյան*	*1920 թ. սեպտ[եմբերի] 1-ին*	*մեկ*	*18.800*	*18.800*	*տրված է ս/թ 21 դեկտ[եմբերի] - 110 պահանջ[ագրով] /Առձեռն ֆոնդ պետական գանձարանի*

Լուսավորության ժողովրդական կոմիսար՝
[Ա. Հովհաննիսյան]
Ավագ հաշվապահ

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 360, թ. 72 և շրջ.: Պատճեն: Ձեռագիր:

-6

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԸՆԿ. ԿՈՄԻՍԱՐԻՆ

Ձեկուցում Արվեստների բաժնի վարիչի
16 դեկտեմբերի 1920 թ.
Երևան

Նախկին կառավարության օրով Արվեստների բաժինը Հանրային կրթության նախարարության մեջ կից է եղել միևնույն նախարարությանը և միայն սույն տարվա սեպտեմբերից դառել է ուրույն բաժին: Հնագիտական և ճարտարապետական ճյուղը ենթակա է եղել առանձին վարչության:

Արվեստների բաժնի գործունեությունը սահմանափակվել է հետևյալում.

1) Աչքի առաջ ունենալով, որ պատմական նոր պայմանների դասավորումով Հայաստանում նոր ու մեծ պահանջներ պիտի առաջանան թատերական գործի[1] *մեջ և մեր թատերական ներկա սերունդը Հայաստան գալով միայն իր ընթացիկ գործը պիտի տեղափոխե իր հետ և շարունակե այն տրադիցիանե-*

րը, որ ժառանգել է օտար միջավայրերի մեջ և որ, վերջապես, այդ սերունդը շուտով կհեռանա ասպարեզից, հարկ համարվեց հիմիկվանից հոգալ սկսնակ ուժերի հավաքման և կրթության մասին՝ ստեղծելով նոր միջավայր և հետզհետե պատրաստելով թարմ ուժեր Հայաստանի նոր թատրոնի համար: Ուստի և անցյալ տարի հանգուցյալ Օվի Սևումյանին[2] հանձնարարվեց Պոլիս գնալ և այնտեղ հիմնել մի ժամանակավոր դրամատիկ ստուդիա պատանի ուժերին մեջ քաշելու, վարժելու և ընտրությամբ բերելու Հայաստան՝ հենց որ տեխնիկական պայմաններ ստեղծվեին Երևանում:

Աչքի առաջ կար նոր ուժերին գրավել Թիֆլիսից և ուրիշ կողմերից՝ միաժամանակ սրանց միացնել նաև բուն Հայաստանի սկսնակներին: Դերասան Սևումյանն անցյալ տարի ճանապարհվեց Պոլիս և ամբողջ ձմեռ զբաղվեց այդ գործով, կազմեց հուսատու սկսնակների մի խմբակ, բայց, դժբախտաբար, գործը կիսատ մնաց իր մահվան պատճառով: Այնուհետև Երևանում դերասան Վ. Միրզոյանը[3] ինքնաբերաբար հիմնել էր մի դրամատիկ ստուդիա: Չկարենալով իր վրա վերցնել գործի դրամական ծանրությունը՝ նա դիմեց կառավարության աջակցությանը: Կառավարությունն իր վրա վերցրեց ստուդիայի օժանդակությունը՝ միաժամանակ ստուդիան վերածելով տարրական դրամատիկ դպրոցի, ուր ավանդվում է ամենաանհրաժեշտ գիտելիքներ նույն Միրզոյանի ձեռքով՝ մասնակցությամբ այլ դասախոսների:

2) Անցյալ տարվանից Երևանում գոյություն ունեցող Գրական-գեղագիտական ընկերությունը[4] ծրագրել էր հիմնել մի կոնսերվատորիա: *Կառավարությունը, ընդառաջ գնալով ընկերության վարչության դիմումին, նյութական միջոցներ տվեց մտադրությունը իրագործելու: Կոնսերվատորիան պիտի բացվեր այս տարի աշունքվանից և սկսված էին այդ առթիվ բանակցություններ Թիֆլիսի ուժերի հետ: Բանակցությունները հաջող հետևանք չունեցան՝ շնորհիվ այն հանգամանքի, որ երաժիշտ ուժերը, բացի տեխնիկական անհարմարությունները, աչքի առաջ ունենալով պատերազմի հանգամանքները, հարցը ձգձգում էին մինչև սույն տարվա հունվարը: Միաժամանակ խանգարում էր շենքի բացակայությունը: Որոշվեց կոնսերվատորիայի գործը սկսել հենց այն պայմաններում, որի մեջ դրված էր այդ գործը, այսինքն՝ պարապմունքներն սկսել առանձին սենյակներում, թեկուզ դասատուների տներում: Գործի ղեկավարությունը հանձնվեց երաժիշտ Սարգիս Բարխուդարյանին[5], որը սկսեց պարապմունքներն իր բնակարանում՝ ավանդելով երաժշտության թեորիա և կոմպոզիցիա: Համեմատաբար ավելի հաջող եղավ* խմբավարական դպրոցի *ձեռնարկությունը նույն Սարգիս Բարխուդարյանի ղեկավարությամբ, որ գործակից դասատուների հետ անցյալ և ներկա տարում Գայանյան դպրոցի շենքում ավանդում է երգեցիկ խմբի արվեստը՝ պատրաստելով խմբավար ուսուցիչներ դպրոցների կամ ազատ գործունեության համար: Ներկա տարվա ընթացքում Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը որոշել էր հիմնել քաղաքային* միջնակարգ երաժշտական դպրոց: *Շենքի և անձնական կազմի հարցը գրեթե լուծված էր՝ մնում էր անձնական կազմի ծախքերի հարցը: Դրա համար կառավարությունը հատկացրեց որոշ գումար և դպրոցը պիտի բացվեր նոյեմբեր-դեկտեմբերին: Պատերազմը[6] խանգարեց այդ ձեռնարկությունը նս: Սույն տարվա մայիսից խմբավար-երաժիշտ Ռուբեն Տիգրանյանն ուղարկվեց*

Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ, Դիլիջան՝ տեղերում երգեցիկ խմբեր կազմելու և կոնցերտներ տալու, որ և լիովին իրագործված է:

3) Այնուհետև որոշ չափով երկու նվագ օժանդակություն *է տրված մի շարք հայ հեղինակների, հրապարակախոսների:*

4) Արվեստների քաջալերման գործին եթե ավելացնենք նաև անցյալ տարվա նկարչական ցուցահանդեսը*, որ կառավարության օժանդակությամբ բացվեց Երևանում և մեր անվանի նկարիչների գործերի գնումը, սրանով մենք տված կլինենք նախկին կառավարության ժամանակ գոյություն ունեցող Արվեստների բաժնի գործունեությունը:*

Հասկանալի պատճառներով խնդրի սուբյեկտիվ կողմը թողնելով *և օբյեկտիվ կողմը մեջ բերելով՝ հարկ եմ համարում մատնանշել այն խանգարիչ հանգամանքները, որոնց հանդիպեցի առաջին իսկ օրից՝ ստանձնելով Արվեստների բաժնի ղեկավարությունը: Երևանում գոյություն չունի ոչ մի հարմար շենք թատրոնի համար:* Ջանփոլադյանի և նախկին ակումբի *բեմերը չէին կարող բավարարել լուրջ թատերական պահանջներին: Այդ շենքերում կարելի էր ավելի մեծ թատերական գործի ձեռնարկել, սակայն հին ակումբը ծառայում էր պառլամենտի շենքի համար: Մտադրություն կար պառլամենտի համար հատկացնել նորակառույց, բայց կիսատ գիմնազի շենքը: Ձեռնարկված էր այդ իրագործելու, սակայն վարպետները մտան գորքի շարքը և ատաղձի որոշ մասերը Թիֆլիսից չհասան, ուստի և հին պառլամենտի շենքը չազատվեց: Մինչդեռ նույն այդ շենքի մեջ պիտի տեղավորվեին* թատրոնը, դրամատիկ ստուդիան *(նոր ստուդիա, որ պիտի հիմնվեր դերասաններ Մանվելյանի[7] և Ալիխանյանի[8] ձեռքով) և* նկարչական *դպրոցը: Այդ շենքում պիտի կենտրոնանար Արվեստի գործը, այդտեղ պետք է հավաքվեր երկրի բոլոր գեղարվեստական ուժը և, ճյուղեր առնելով, հետզհետե զարկ տար Հայաստանի բոլոր կողմերը: Մտադրություն կար կազմակերպելու զորական, ժողովրդական կոնցերտներ ու ներկայացումներ, տեղական և թռուցիկ խմբեր, բայց պատերազմը խանգարեց այդ բոլոր մտադրություններն իրագործելու:*

Նախկին Կրթ[ության] մինիստրության Արվեստների
բաժնի վարիչ՝ Դերենիկ Դեմիրճյան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 679, թ. 59 – 60 շրջ.: Բնագիր: Ինքնագիր:

-7

ՔԱՂՎԱԾՔ
ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

1930-ական թվականների առաջին կես[1]

<…> Հինգ տարի Շվեյցարիա մնալուց հետո[2] *վերադարձա Թիֆլիս, ուր մտա Հովնանյան դպրոցը՝ իբրև հայ լեզվի և գրականության դասատու մինչև 1921 թիվը:*

Պատերազմը, Հոկտեմբերյան հեղափոխությունը, Կովկասյան ազգային հանրապետությունները, տաճկական արշավանքները, փախստականությու-

նը, սովը և աղետներն ինձ ցնցել էին, բայց ստեղծել էին մի խառնաշփոթ մտավոր վիճակ և տրամադրություն: Ես ներվային հիվանդ տարիներ ապրեցի: 1914[3] թվի Սարիղամիշի պարտության[4] սարսափից իմ Ռոստով փախչելս, 1920-ի տաճիկների երկրորդ արշավանքի ժամանակ առաջ բերեց հակառակ բեկումն՝ գալ Երևան և անձամբ կրել այն վիճակը, որին կենթարկվի ժողովուրդը[5]: Դա հուսահատական կրիզիսի ծանր շրջան էր: 1920-ին Երևանում Արվեստների [բաժնի] վարիչի պաշտոնում ժողովրդի հուսահատ օրերում իմ մեջ զգացի քաղաքական բեկման առաջին շորշոփը: Հայաստանի խորհրդայնացումը ինձ կապեց նոր քաղաքական օրիենտացիայի հետ, որին հետևեց և գրական օրիենտացիան և, կարծում եմ, այդտեղ էլ տեղի ունեցան իմ ճեմարանական □կլասիցիզմի□, Ժնևի քաղաքական մթնոլորտի ազդեցությունների հանդիպումներն ու միացումը՝ նոր մշակմամբ: <…>

Դ. Դեմիրճյան

ԳԱԹ, Դ. Դեմիրճյանի ֆոնդ, ց. 1, գ. 768, թ. 7 – 9: Բնագիր: Ինքնագիր: